ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-173

Քնքուշ Մալխասյան
Դոցենտ

Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան
maqnqush@gmail.com

ՋՈՒՂԱՅԻ ՏԱՐԱԶԸ (18–20-րդ դդ.)*

Հիմնաբառեր. Ջուղա, առևտրական կապեր, զգեստ, գործվածք, ասեղնագործություն, գլխի հարդարանք, եվրոպական հագուստ:

Հին Ջուղան հիմնադրվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Երնջակ գավառում և գտնվել է Երասխ ու Երնջակա գետերի միախառնման հատվածում, Մեծ Հայքի Վասպուրականի Գողթն գավառում: Հին Ջուղան հիմնադրել է հայոց թագավոր Տիգրանը Աժդահակին հաղթելուց հետո (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1998, N 4, 426):

Հին Հայաստանի աշխարհագրական բաժանման համաձայն Երնջակ գավառը Մեծ Հայքի Սյունյաց տասներկու գավառներից մեկն է: Սահմանակից գավառներից են Ծղուկ գավառը (Սիսիան), արևմուտքից ու հյուսիսից՝ Նախիջևանի գետը, իսկ հարավից՝ Գողթն գավառը (Սեդրակյան 1872, 387–388):

Ըստ Ղևոնդ Ալիշանի. «Ավանդութեան պատմութեան մերոյ՝ Հայկազնն Տիգրան ի բերելն ի Հայս զգերութիւն Մարաց՝ յետ պարտութեան Աժդահակայ, զտիկնանց տիկին նորին զԱնոյշ և զյոլովս ի հարճիցն և յարբանեկաց՝ բնակեցոյց ի միջոցի Մասեաց և Նախճաւանի, և առանձինն յերիս ավանս, յորոց մի էր այս Ջուղա» (Ալիշան 1893, 409):

Արամ Վրույրն իր ուղեգրություններում նշում է. «Ջուղայի կործանված կամուրջը և քարվանսարաները ապացույց են, որ նա Անիի ծաղկած ժամանակ դեպ Պարսկաստան գնացող ու վերադարձող քարավանների գլխավոր կայանատեղիներից մեկն է եղել: Դա հիմք է տալիս մտածել, որ այդպիսով հաստատվում է տեղացիների այն կարծիքը, ըստ որի Անիի ամայանալուց հետո (15-րդ դար) սկսվել է Ջուղայի զարգանալը: Դա հիմնավորում է նաև տեղացիների այն բացատրությունը, թե իբր Անին սկսել է ավիրվել, իսկ Ջուղան ճոխանալ և համարվել է նրա մի մասը կամ ճյուղը, այսինքն «Ճյուղա» – Ջուղա» (Վրույր 1967, N 4, 173):

Ջուղան ճանապարհորդների կողմից հիշատակվել է տարբեր հնչյունափոխված անվանումներով՝ Zulfa, Giulfa, Julfa և այլն:

Հին Ջուղան, շնորհիվ իր արհեստագործական և առևտրական ակտիվ գործունեության, շատ արագ զարգացավ և դարձավ ժամանակի ամենահարուստ ու

* Ստացվել է 13.01.2023 թ., ուղարկվել է գրախոսման 24.01.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

գեղեցիկ քաղաքներից մեկը: Միջին դարերում բազմաբնակ ավանից Ջուղան վերածվեց մոտ 40000 բնակիչ ունեցող հարուստ քաղաքի (Ալիշան 1893, 410):

Ըստ Ղ. Ալիշանի Շահ Աբասին դիմավորելուց քաղաքը զարդարվել և ներկայացել է իր ամբողջ ճոխությամբ. «Իշխանք և ծերք և երիտասարդք ի զարդ և ի զէնս ոսկեհուռն սիրատեսիր հանդերձիւք պճնազարդեալք ընդ առաջ ընթանային և նորաբողբոջ դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ և զազնիվ գինի մատուցանեին… » (Ալիշան 1893, 414) :

Հին Ջուղայի անսահման հարստությունը չէր կարող անտարբեր թողնել Շահ Աբասի նման կողոպտիչ բռնավորին, և պատահական չէր, որ նա Հայաստանի ավերման և հայաթափման իր ծրագիրը սկսեց հենց Ջուղայի ավերումով:

Ինչպես Առաքել Դավրիժեցին է նշում, Շահ Աբասը Հայաստանի բոլոր գավառներից (Եղեգնաձոր, Լոռի, Համզաչիման, Ապարան, Շիրակ, Ալաշկերտ, Կարս, Մակու, Մանազկերտ, Արծկե, Կարին, Արճեշ, Վան և մնացյալ) բոլորին ավարով ու գերությամբ տեղահանեցին ու բերեցին Պարսկաստանի Սպահան քաղաք (Դավրիժեցիոյ 1896, 52, 63):

Այսպես 1604–1605 թթ. շահ Աբասի ավերիչ քաղաքականության հետևանքով Ջուղայի բնակչությունը բռնի տեղահանվեց և վերաբնակեցվեց Պարսկաստանի Սպահանի մոտ գտնվող Ջանդարութ գետի հարավային կողմում, որտեղ էլ նաև Հայաստանի տարբեր հատվածներից գաղթյալների համատեղ ուժերով ստեղծվեց Նոր Ջուղան: Շահ Աբասը, հասկանալով, որ կարող է ի շահ Պարսկաստանի օգտագործել հայերի շինարարական, ստեղծագործական ունակությունները, ինչպես նաև առևտրական կապերը, մեծ արտոնություններ տվեց հայերին՝ հատկապես առևտրով զբաղվողներին:

Վերաբնակեցված ջուղայեցիները պահպանեցին իրենց կենսաձևը և շարունակեցին զբաղվել արհեստներով ու առևտրով՝ առավելապես հաջողության հասնելով կտորի արտադրության ՝ ոստայնանկության մեջ (Ստեփանյան 2000, 123: Նոր Ջուղա, 1909, 62: Բայրբուրդյան 2007, 129):

Արտադրության հետ մեկտեղ զարգանում էր կտորի առևտուրը: Խոջաները ներմուծում և արտահանում էին տարբեր որակի (մետաքսյա, բամբակյա, բրդյա) նուրբ ու ընտիր կտորներ, ներկանյութեր, գորգեր և այլն: Նոր Ջուղայի վաճառականները առևտրական խոշոր կապեր էին հաստատել Թուրքիայի, Հնդկաստանի, Հոլանդիայի, Վենետիկի հետ (Սարուխան 1926, 37):

Եվ ամենևին էլ զարմանալի չէր, որ լինելով գործվածքեղենի արտադրության և առևտրի մեծ կենտրոն՝ Նոր Ջուղայի բնակչությունը չէր սահմանափակվում միմիայն ազգային տարազ կրելով: Հարկ է նշել, որ նրանք հագնվում էին բավականին էկլեկտիկ՝ համադրելով Հայաստանի տարբեր տարածաշրջանների ազգային տարազը եվրոպական հագուստի հետ: Իհարկե, եվրոպական հագուստը մուտք գործեց աստիճանաբար և հասու էր միայն բարձրաստիճան անձանց:

Նոր Ջուղայի տարազի վերաբերյալ պատկերացում կարող ենք կազմել Պարսկաստանում հայկական որմնանկարներից, գեղանկարներից, խոջաների ունեցվածքներից և ճանապարհորդների գրառումներից, լուսանկարներից, ինչպես նաև թանգարաններում պահպանված հագուստներից:

Նոր Ջուղայում կանացի զգեստի համալիրը բաղկացած էր հետևյալ հագուստամասերից. սպիտակեղեն, վարտիք, զգեստ, կարճ վերնազգեստ՝ կուռտիկ, կրծկալ, վերարկու-քուրք, գլխի հարդարանք, կոշիկ-գուլպա և զարդեղեն: Սպիտակեղենը կարում էին տեղում արտադրվող բյազ սպիտակ բամբակյա կտորից (գործվածքների տերմինները տե՛ս Ստեփանյան, 2000, 126–132): Այն իր ձևվածքով բավական պարզ էր, երկարությունը հասնում էր մինչև ծնկները, թևքերը երկար էին, վիզը կլոր բացվածքով էր, որն առաջամասում ուներ երկայնակի մինչև կուրծքը հասնող երկար ճեղք՝ կոճկելատեղ:

Շապիկի թևքաբերանները, պարանոցի և փեշի եզրերը հաճախ զարդարվում էին ժանյակով կամ տրեզով (երիզ – ոսկեթելով կամ մետաքսաթելով հյուսված հաստ թել, ժապավեն, տե՛ս Ավագյան 1983, 102):

Աղջիկների զգեստները հիմնականում բամբակյա էին, բաց գույների մեջ: Գործվածքները զարդարված էին մանր ծաղիկներով կամ շատ տարածված «բադամներով» (բադամ – նուշ, Աճառյան 1969, 255): Զգեստները ամբողջապես փակ էին, երկարափեշ, պարանոցի կլոր բացվածքով: Թևքաբերանները զարդարվում էին ժանյակով կամ տրեզով: Զգեստները գոտկատեղի հատվածում կտրվածքով էին, իսկ մեջքի հատվածում փեշն ուներ առատ ծալադարսեր, որոնք կարվում էին գոտկատեղի մասում: Դրա շնորհիվ զգեստի ընդհանուր տեսքը մարմնին կիպ նստեցված էր ստացվում:

Կանանց վերնազգեստը կարում էին մետաքսյա կամ «ալաջա» կոչվող ծաղկավոր կտորներից, որոնք հիմնականում կարմիր, կանաչ, կապույտ, օքրա գույների էին (Հայաստանի պատմության թանգարան (այսուհետ ՀՊԹ), Ա 11079/2: ՀՊԹ, Ա 11347: ՀՊԹ, Ա 4603: ՀՊԹ, Ա 4598: ՀՊԹ, Ա 10034: ՀՊԹ, Ա 11346/1) :

Վզի հատվածը լինում էր կլոր բացվածքով, վերադիր օձիքով, երկայնակի ճեղքով, որը զարդարվում էր հարուստ դրամաշարերով, ժապավեններով կամ կոճակ-ճարմանդներով (նկ. 1): Վերնազգեստի թևքերը ձևավոր են, սուր ելուստով (նկ. 2): Դրանք նույնպես զարդարված են ժանյակներով: Կանանց հագուստը «միթան» (տերմինը միթան կամ չինչին – զգեստ, Սպահանի Հազարջրիր գյուղի բնակիչ Սանդուխտ Ծատուրյանի) բաղկացած էր երկու զգեստից՝ մինչև ոտքերը հասնող առաջին շերտից և նրա վրայից հագնվող երկրորդ զգեստից, որի երկարությունը հասնում էր մինչև ծնկները (նկ. 7): Առաջին և երկրորդ զգեստները ձևվածքով համարյա նույնն էին՝ որոշակիորեն նման Սյունիք-Արցախյան տարազախմբի վերնազգեստ-արխալուղներին:

Զգեստները կարվում էին միագույն կամ գունավոր (կանաչ-կարմիր) կտորներից: Ձևում էին գոտկատեղից կտրված և խիտ ծալքերով հավաքված: Կողքային հատվածները կոնքից մինչև փեշի հատվածը ճեղքերով են՝ զարդարված այլ գույնի կտորե ժապավենով կամ տրեզով: Վրայի զգեստի կողքային կարի մեջ արվում էր գրպանաճեղք՝ զարդարված ժապավենով, որը թույլ էր տալիս օգտագործել տակի գրպանը (նկ. 2բ): Կանանց զգեստների թևատակերը ճեղքով էին, իսկ թևքաբերանները՝ լայն: Եզրային հատվածները կիպ կոճկելու համար անում էին տրեզով ձևավորած կամ՝ մետաղյա օղակ-կոճակներով (նկ. 3):

Ջուղայում կանայք սրտանոց-կրծկալ «մանդիլը» հագնում էին զգեստի վրայից, ինչպես որ այն գործածվում էր Գողթնում, Մեղրիում (Ավագյան 1983, 50): Մանդիլը լինում էր քառանկյունաձև, ծոծրակի և գոտկատեղի կապիչներով կամ Վասպուրականի գոգնոցի տարբերակով ամրացվում էր թևերի տակով և գոտկատեղի կապիչներով: Այս ամենի վրայից հագնում էին նաև «անթարու» (անթարի – վերնազգեստ, Ավագյան 1983, 102) նման երկարափեշ վերնազգեստ, որն ուներ վզի եռանկյունաձև բացվածք և կոճկվում էր կրծքի տակ մեկ կոճակով: Այս վերնազգեստի թևքերը նույնպես ձևավոր էին՝ ամբողջությամբ պատված ժանյակներով կամ տրեզով: Վերնազգեստների վրա հաճախ արվում էր ոսկեթելով վերադիր ասեղնագործություն բուսական զարդանախշերով՝ կենաց ծառի ոճավորված պատկերներով:

Վերնազգեստի կամ զգեստների վրայից մեջքին կապում էին մետաքսյա գծավոր լայն գոտի կամ արծաթյա միջին լայնության խոշոր տախտակներով ու ճարմանդով գոտի (ՀՊԹ, Ա 114991/16: ՀՊԹ, Ա 11079/8):

Վերնազգեստի մեկ այլ տարբերակ էր կարճ կուռտիկը, որի երկարությունը հասնում էր մինչև գոտկատեղ կամ կոնքերը: Ոսկեթելով ասեղնագործված այս կուռտիկը կարվում էր մուգ թավիշից: Առաջամասն ուներ եռանկյունաձև բացվածք, գոտկատեղից կտրված էր և դեպի ներքև ընկած հատվածը լայնացման նպատակով հավաքված էր մի քանի քառանկյունաձև կտորներով:

Ուսումնասիրելով ՀՊԹ–ի լուսանկարները (ՀՊԹ, ԱԼՖ 2448: ՀՊԹ, ԱԼՖ 2449)՝ նկատում ենք կանանց ուսերին շղարշե թիկնոց, որը եզերվում էր ժանյակով կամ տրեզով (Հակոբյան, Հովհաննիսյան 2007, 54): Այս հագուստամասը չի հանդիպում հայկական որևէ տարազախմբում, որն էլ հիմք է տալիս ենթադրելու, որ այն ունի եվրոպական ծագում: Մեկ այլ տեսակետի համաձայն այն կրել են կուրծքը քողարկելու համար:

Կանայք, ինչպես նաև երեխաները ավանդական ձևով հագնում էին վարտիքներ (ՀՊԹ, Ա 4600), որոնք լինում էին նեղ և լայն: Ոտքերին կրում էին թավշյա ոսկեթել ասեղնագործությամբ սրածայր մուճակներ: Մուճակները, որոնք չունեին աջ և ձախ տարբերակում, մեծ մասամբ կարվում էին կարմիր թավշից: Հագնում էին նաև կանաչ չմոշկներ, իսկ պարսկահայ կանայք իրենց ոտքերին կրում էին գույնզգույն, նախշազարդ գուլպաներ և քոշեր (քոշ – ոտմսման, Ավագյան, 103):

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն փաստը, որ Պարսկաստանի գուլպաների հիմնական մատակարարը հայերն էին (Նոր Ջուղա 1909, 64):

Ոտքերին որպես զարդ կրում էին խալխալ (խալխալ – ոսկյա կամ արծաթյա ապարանջան, տե՛ս Ավագյան 1983, 98):

Նոր Ջուղայում գործածական էր նաև թավշից կամ մահուդից վերարկու քուրքը (Ավագյան 50): Քուրքի այս ձևը որոշ առնչություններ ունի Գողթնի և Սյունիք-Արցախի կանանց վերարկուի հետ՝ տարբերությամբ, որ այստեղ թևքերը համեմատաբար կարճ են, մինչև արմունկները: Քուրքի թևքաբերանի, կոճկելու ու փեշերի եզրերը զարդարում էին մետաքսյա ոսկեթել տրեզով, այնուհետև աղվեսի 7–10 սմ լայնությամբ մորթու շերտով:

Վերարկուն, ինչպես նաև վերնազգեստը, աստառապատում էին «կինդյակ» ծաղկավոր քաթանե կամ բամբակյա կտորներով:

Կանանց տարազի համալիրը ամբողջանում էր բավական բարդ գլխի հարդարանքով, որն իր մեջ ներառում էր մի շարք դետալներ: Կանայք մազերը մեկ հերագծով բաժանում էին երկու մասի և հյուսում, այնուհետև ճակատից վերև կապում էին սպիտակ գլխաշորն այնպես, որ մազերը մասամբ երևան: Այդ գլխաշորը զարդարում էին ժանյակով կամ կտորից պատրաստված ծաղիկներով: Գլխաշորի վրայից դնում էին ցածր կոտիկ (ՀՊԹ, ԱԼՖ 2453: ՀՊԹ, Ա 11717: ՀՊԹ, Ա 11079/16: ՀՊԹ, Ա 1179/15), որը գլխին ամրանում էր ծոպավոր, մինչև ուսերն իջնող գլխաշորով: Գլխաշորերը լինում են միագույն, ծաղկավոր և ասեղնագործված: Հաճախ հանդիպող զարդաձևերից է պարույրաձև արևանշանը (նկ. 4): Կոտիկի հետ միասին կրել են նաև ցածր գլխարկներ, թասակներ ու գդակ-արախչիներ (կոտիկ, արախչի – գլխի հարդարանք, Ավագյան 1983, 96, 99: ՀՊԹ, Ա 11717/2: ՀՊԹ, Ա 1171/1: ՀՊԹ, Ա 11079/11: ՀՊԹ, Ա 11717/5: ՀՊԹ, Ա 11079/14):

Նոր Ձուղայում, ինչպես նաև Շատախում, Սյունիք-Արցախում աղջիկները մինչև ամուսնանալը գլխաբաց էին: Ամուսնանալուց հետո նրանց գլխի հարդարանքի մասն էր կազմում քիթ-բերան-ծնոտի փաթաթանը, որը ինչպես Գողթնի, Սյունիք-Արցախյան տարազախմբում ևս խորհրդանշում էր հնազանդություն (միջընտանեկան, հասարակական կապեր, վերապրուկ կրակապաշտություն – զրահադաշտությունից, Լիսիցյան 1969, 257: Հակոբյան 1934, 790: ՀՊԹ, ԱԼՖ 1600: ՀՊԹ, ԱԼՖ 2519): Այս փաթաթանը սպիտակ գույնի կտոր է Գողթնում՝ բըշմաղ, որը բերանի, քթի վրայով երկու ծայրով կոճկվում է ծոծրակի մոտ և մի քանի շերտ փաթաթվելով վզի շուրջը, տեսողական երկարացնում էր պարանոցը (Լալայան 1905, 115):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նորահարսի գլխի հարդարանքը՝ որը բաղկացած էր թանձր ոսկեթել ծածկոցից՝ քողից ու հարսի գլխազարդից՝ փնջից, որը հավատալիքային դաշտում ունի չարխափան նշանակություն (Իսրայելյան 2012, 108: ՀՊԹ, Ա 10997): Փունջը իրենից ներկայացնում է խորանարդաձև, շեղանկյունաձև գույնզգույն թավշապատ կտորներից ու բազմաշար ուլունքներից կազմված մոտ հիսուն սանտիմետր երկարության ունեցող թելափունջ, որը հարսանիքի օրը դրել են հարսի գլխին՝ քողի վրայից (նկ. 5: Նոր Ձուղա, 195):

Նոր Ձուղայի կանացի տարազը հարուստ է նաև ամենաբազմազան զարդերով: Միայն գլխի հարդարանքում նրանք կրել են գլխակապի տակից ամրացվող երեսի շրջագիծը բոլորող ամենատարբեր գինդաշարեր, դրամաշարեր, բոժոժներ, ուլունքներ քունքակախիկներ, որոնք լինում էին մարջանից և այլ կիսաթանկարժեք քարերից:

Կուրծքը զարդարել են բազմաթիվ դրամաշարերով, գինդերից բաղկացած վզնոցներով, որոնց կենտրոնում կախել են մեծ դրամներ, խաչեր, տարբեր եզրագիծ ունեցող արծաթյա կամ ոսկյա զարդանախշված տախտակներ: Ձեռքերին կրել են ապարանջաններ, իսկ մատներին՝ տարբեր քարերով զարդարված մատանիներ (ՀՊԹ, Ա 5139: ՀՊԹ, Ա 9018: ՀՊԹ, Ա 1976: ՀՊԹ, Ա 1980: ՀՊԹ, Ա 6388: ՀՊԹ, Ա 4948: ՀՊԹ, Ա 6573: ՀՊԹ, Ա 6574: ՀՊԹ, Ա 6910):

Նոր Ջուղայի կանացի տարազը, որը ձևավորվել է չորս դարաշրջանի ընթացքում, Պարսկաստանում շարունակել են կրել մինչև 1960-ականները: Հայաստան ներգաղթյալների մոտ դեռ պահպանվում են իրենց ազգային հագուստները, որոնցով նրանց առ այսօր կարելի է հանդիպել եկեղեցական տոն օրերին (նկ. 6):

Տղամարդկանց ավանդական հագուստը, տարբեր աղբյուրների վկայությամբ, ավելի նման է եղել պարսկական տարազին (նկ. 8) և միայն ավելի ուշ ձևավորվել է եվրոպական ազդեցությամբ (*Տէր* Յովհաննեանց 1881, 289: Հակոբյան, 1934, 790: Նոր Ջուղա, 1909, 104):

Տղամարդու ավանդական հագուստի համալիրը համեմատաբար պարզ էր և զուսպ: Այն բաղկացած էր հետևյալ հագուստամասերից. շապիկ, վերնազգեստ-արխալուղ (արխալուղ – տղամարդկանց վերնազգեստ, Ավագյան 1983, 96), վարտիք, վերարկու-չուխա (չուխա-վերնազգեստ, 101), գոտի, գլխարկ և ագանելիք:

Շապիկը կարվում էր սպիտակ բամբակյա կտորից՝ կլոր վզով, մինչև կոնքերն իջնող երկարությամբ: Արխալուղը կարվում էր մետաքսյա գործվածքից, գոտկատեղը կարով էր, ուներ կանգուն օձիք, որը կոճակով ամրանում էր վզի վրա: Թևքերը լայն էին և թևքաբերանի մոտ ծալքերով հավաքվում էին կտորի ոչ այնքան լայն շերտի՝ մանժետի մեջ: Դա էլ իր հերթին նույնպես կոճկվում էր կոճակով կամ ճարմանդով:

Արխալուղին աստիճանաբար փոխարինելու եկավ եվրոպական վերնաշապիկն իր վրադիր օձիքով:

Վարտիքները կարվում էին մուգ գույնի մահուդե կտորներից՝ չափավոր լայնությամբ: Վրայից հագնում էին առաջամասն իրար վրա եկող երկար վերնազգեստ չուխան: Չուխան ուներ երկու տարբերակ. առաջին տարբերակում կարվում էր սև կամ մուգ կապույտ բրդյա, շալե կտորից, գոտկատեղից ներքև՝ լայնացնելու նպատակով դարսեր էին անում: Չուխայի երկարությունը հասնում էր մինչև ոտքերի ծայրերը[1], թևքերը նույնպես երկար էին և հավաքվում էին դաստակի շուրջ: Առջևից կոճկվում էր մեկ ճարմանդ-կեռիկով, իսկ վրայից փաթաթում և կապում էին լայն, երկար մետաքսյա գոտի (ՀՊԹ ԱԼՖ 2449: ՀՊԹ ԱԼՖ 2472):

Վերարկու չուխայի երկրորդ տարբերակը կարվում էր բրդյա տնայնագործական գործվածքից կամ մահուդից: Այստեղ չուխայի բոլոր եզրերը հարդարվում էին մետաքսյա ժապավենով կամ ոսկեգույն երիզով և կոճկվում ճարմանդով:

Նոր Ջուղայում տղամարդիկ գլուխներին դնում էին թաթի կամ փափախ: Ոտնամանի փոխարեն հագել են նախշազարդ գուլպաներ և սոռեր: Հիշատակվում է «չուշտ» կոշիկի տեսակը, որը չուներ աջ ու ձախ տարբերակում (Նոր Ջուղա, 104):

Կրել են նաև պարսկական «գիվա» կոշիկը, որը կարվում էր լավ մշակված կաշվից, իսկ տակի ամբողջական հատվածը պատրաստվում էր բրդից, որը հավանաբար անցնում էր երկարատև մշակում և վերջնական տեսքում կրկնում էր ոտնաթաթի ուրվագիծը (ՀՊԹ, Ա 11717/4): Այդպիսի կոշիկներ հագնում էին տար-

1 1946 թ. Պարսկաստանից գաղթած հայրենադարձ Վահան Մուսախանյանը պատմում է, որ երբ նրանք վերադարձել են Հայաստան, հագնված են եղել եվրոպացու նման և կրել են լայնեզր գլխարկներ ու երկար սև վերարկուներ, որի պատճառով նրանց կոչել են «սև պալտոնավորներ»:

բեր խավերի տղամարդիկ մինչև 1940-ական թթ: Երբ երեխաների համար այդպիսի կոշիկ էին առնում, ասում էին. «գիվանները դիր թևիդ տակ, բոբիկ քայլիր, որ չմաշվեն…» (Երեմեան, 2011, 94):

Տղամարդկանց հագուստի համալիրում անհրաժեշտ մաս են կազմել արծաթյա լայն գոտիները, խոշոր ակներով մատանիները, ինչպես նաև ժամացույցները:

Այսպիսով, Նոր Ջուղայի հայերի ավանդական հագուստն իր մեջ ներառում է պատմական Հայաստանի մի շարք պատմազգագրական շրջանների՝ Նախիջևանի, Սյունիք-Արցախի, Վասպուրականի, ինչպես նաև Պարսկաստանի զգեստների ոճավորված տարրեր, որոնց հետագայում գալիս են լրացնելու նաև եվրոպական հագուստի ազդեցությունները:

Նոր Ջուղայի հայերի ավանդական հագուստի ձևավորման գործընթացում իրենց կարևոր դերն են խաղացել նաև շրջակա՝ Սպահան, Փերիա, Քյազազ, Քյամարա, Բարվարու, Շափուրաբադ և այլ գավառների հագուստները:

Հագուստներն առանձնանում էին իրենց ուրույն, բազմառճ տեսքով, որտեղ միաժամանակ կարելի էր հանդիպել և՛ միագույն, և՛ ծաղկավոր, և՛ տարբեր բուսական, երկրաչափական զարդամոտիվներով, ոսկեթել ասեղնագործություններով զգեստներ: Կանանց բազմաշերտ ու բազմառճ հագուստների համալիրները ամբողջանում էին առատ զարդեղենով, դրամաշարերով, լայն գոտիներով: Խոջայական ընտանիքների առևտրական կապերի և շփումների շնորհիվ ջուղայեցիները սկսում են գործածել եվրոպական հագուստ: Այդ պատճառով նրանք անգամ իրենց հայրենիքում առօրյա կյանքում կրում էին եվրոպական հագուստ (Հակոբյան, Հովհաննիսյան 2007, 87):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային առարկաներ

ՀՊԹ, Ա 1976:
ՀՊԹ, Ա 1980:
ՀՊԹ, Ա 2242:
ՀՊԹ, Ա 2252:
ՀՊԹ, Ա 4600:
ՀՊԹ, Ա 4598:
ՀՊԹ, Ա 4603:
ՀՊԹ, Ա 4948:
ՀՊԹ, Ա 5139:
ՀՊԹ, Ա 6388:
ՀՊԹ, Ա 6573:
ՀՊԹ, Ա 6574:
ՀՊԹ, Ա 6910:
ՀՊԹ, Ա 9018:
ՀՊԹ, Ա 10034:
ՀՊԹ, Ա 10997:
ՀՊԹ, Ա 11079/2:
ՀՊԹ, Ա 11079/8:
ՀՊԹ, Ա 11346/1:
ՀՊԹ, Ա 11347:
ՀՊԹ, Ա 1171/1:
ՀՊԹ, Ա 11717/2:
ՀՊԹ, Ա 11717/4:
ՀՊԹ, Ա 11717/5:
ՀՊԹ, Ա 11079/11:
ՀՊԹ, Ա 11079/14:
ՀՊԹ, Ա 1179/15:
ՀՊԹ, Ա 114991/16:
ՀՊԹ, Ա 11717:
ՀՊԹ, ԱԼՖ 1600:
ՀՊԹ, ԱԼՖ 2448:
ՀՊԹ, ԱԼՖ 2449:
ՀՊԹ, ԱԼՖ 2453:
ՀՊԹ, ԱԼՖ 2472 :
ՀՊԹ, ԱԼՖ 2519:

Գրականություն

ԱԼԻՇԱՆ 1893 – Հայր Ղևոնդ Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Մ. Մխիթարեան Վանս, Ի Ս. Ղազար, Վենետիկ, 1893:

ԱՃԱՌՅԱՆ 1969 – Աճառյան Հր., Հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր 1, Երևան, 1969:

ԱՎԱԳՅԱՆ 1983 – Ավագյան Ն., Հայ ժողովրդական տարազը, Երևան, 1983:

ԲԱՅՐԲՈՒՐԴՅԱՆ 2007 – Բայրբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007:

ԴԱՎՐԻԺԵՑԻՈՅ 1896 – Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցիոյ, Էջմիածին, ՌՅԽԵ (1896):

ԵՐԵՄԵԱՆ 2011 – Երեմեան Ա., ՍՊԱՀԱՆԻ ՓԵՀՋԱ զավառը, Ազգագրություն, Բ հրատարակություն, Նոր Ջուղա, 2011:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2012 –Իսրայելյան Ա., Հմայական պահպանակներ XVIII–XX դդ, Երևան, 2012:

ԼԱԼԱՅԱՆ 1905 – Լալայան Եր., Ազգագրական հանդես, XII գիրք, 1905:

ԼԻՍԻՑՅԱՆ 1969 – Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:

ՀԱԿՈԲՅԱՆ 1934 – Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, (1800–1820), Հատոր Զ, ԺԹ Դար, Յերևան, 1934:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2007 – Հակոբյան Հր., Հովհաննիսյան Ավո, Նոր Ջուղա. Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII–XVIII դդ.), Երևան, 2007:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998 – Հակոբյան Թ.., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից տեղանունների բառարան, Հատոր 4, Երևան, 1998:

ՆՈՐ ՋՈՒՂԱ 1909 – Նոր Ջուղա, Կես դարով յառաջ կամ յիշողութիւնք անցյալ ժամանակայ, գրայ Թ.Տ.Ս., Վիեննա, 1909:

ՍԱՐՈՒԽԱՆ 1926 – Սարուխան, Հոլլանդան և հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վիեննա, 1926:

ՍԵԴՐԱԿՅԱՆ 1872 – Արիստակէս Վարդապետի Սեդրակյան, Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու, «Արարատ» ամսագիր, Էջմիածին, ՌՅԻԱ (1872), Ժ համար, էջ 387–394:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2000 – Ստեփանյան Ա., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Երևան, 2000:

ՎՐՈՒՅՐ 1976 – Վրույր Ա., Ջուղա, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1967, N 4, էջ 169–180:

ՏԷՐ ՅՈՎՀԱՆԵԱՆՑ 1881 – Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան աշխատասիրեալ ի. պ. Յարութիւնէ *Թ. Տէր* Յովհանեանց, Հատոր երկրորդ, Նոր Ջուղա, 1881:

Knkush Malkhasyan
Docent

National University of Architecture and Construction of Armenia
maqnqush@gmail.com

FOLK COSTUME OF JULFA (18th-20th cc.)

Keywords: folk costume, Julfa, trade ties, fabric, embroidery, jewellery, European clothes.

The article represents the description of the folk costume of New Julfa, the preconditions for its formation. A brief historical overview shows the destruction of Old Julfa and the history of the creation and construction of New Julfa. The article categorizes the men's and women's clothing collections of New Julfa with a sequential and detailed description.

The basic idea for the complete reproduction and presentation of the complete appearance of the costumes, in addition to the literature and various articles, was formed due to the researches carried out in the History Museum of Armenia, the fund samples of the Holy Savior Monastery in Isfahan, as well as information received from immigrants who came to Armenia. During the study, there were encountered identities of clothes, details or wearing similarities with clothes from other regions of Armenia, which are the result of their historical formation process.

Кнкуш Малхасян
Доцент

Национальный университет архитектуры и строительства Армении
maqnqush@gmail.com

НАЦИОНАЛЬНЫЙ КОСТЮМ ДЖУГИ (18–20 вв.)

Ключевые слова. национальный *костюм*, Джуга, торговые связи, ткань, вышивка, ювелирные изделия, головной убор.

В статье представлено описание Национального *костюма* Новой Джуги, предпосылки ее формирования. Краткий исторический обзор показывает разрушение Старой Джуги и историю создания и строительства Новой Джуги. В статье классифицированы коллекции мужской и женской одежды Новой Джуги с его последовательным и подробным описанием.

Основная идея полного воспроизведения и представления полного облика костюмов, помимо литературы и различных статей, сформировалась благодаря исследованиям, проведенным в Музее Истории Армении, фондовым образцам Свято-Спасского монастыря в г. Исфахан, а также сведения, полученные от иммигрантов, приехавших в Армению. В ходе исследования были обнаружены тождества одежды, детали или сходство ношения с одеждой других регионов Армении, что является результатом процесса их исторического формирования.

Քնքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18 - 20-րդ դդ.)

Նկ.1. Ջուղայեցի կին։
Ժենյա Խաչատրյանի անձնական արխիվ։

Նկ.2ա. Զևավոր թևքաբերան։ Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքում պահվող հավաքածու։

Նկ.2բ. Գրպանաձեղք կողքային կարի մեջ։ Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքում պահվող հավաքածու։

Նկ.3. Թևքաբերանների կոճկելապեղ։ Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքում պահվող հավաքածու։

Նկ.4. Արևանահիշերով գլխաշոր։ Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքում պահվող հավաքածու։

Նկ.5. Հարսի փոռնջ։
Իսրայելյան Ա., XVIII–XX դդ. հայկական հմայական պահպանակները, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2012, Հավելված / ՀՊԹ, 188 (11097)։

Նկ. 6ա. Խաչիսաթոն Խոսրովի Կարապետյան, ծնունդով Փերիա գավառի Շորշկան գյուղից, այժմ բնակվում է Արմավիրի մարզի Արմավիր գյուղում: Լուսանկարի հեղինակ՝ Սյուզաննա Ղուլիջանյան:

Նկ. 6բ. Սանդուխտ Նահապետի Ծատուրյան, ծնունդով Իրանի Սպահան գավառի Հազարջրիպ գյուղից, այժմ բնակվում է Արմավիրի մարզի Խանջյան գյուղում: Լուսանկարի հեղինակ՝ Սյուզաննա Ղուլիջանյան:

Նկ. 7. Զգեստի հագուստահամալիր (Սանդուխտ Նահապետի Ծատուրյանի սեփականություն): Լուսանկարի հեղինակ՝ Սյուզաննա Ղուլիջանյան:

Նկ. 8. Խոջա Սուլթանի հանդեսային դիմապատկերը (Նոր Ջուղայի խոջայական պալատի որմնանկար) Հակոբյան Հր., Հովհաննիսյան Ավո, Նոր Ջուղա. Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII–XVIII դդ.), Երևան, 2007, Հավելված: